

ԵՂԲԱՅԵՐԸ

Ա.

— Հը՛, հը՛, հը՛... ա՛յ անտէր, դէ մի շարժուի՛ր տեղիցդ է՛...
ախր արիւն քրտինքը ոտներս իջան : — Օհան-աղբարը ուժգին խը-
փում էր կաշուէ գալարուն խարազանով, մի չիւ. չոքորը ցեխի մէջ
խրուած՝ ձիու մէջքին. գլխին, ոտներին. խեղճ կենդանին ամենայն թա-
փով ուժ ու կող էլ անուամբ դուրս քաշելու ախլարի ծանր պարկերով
բռնուած սայլակը, սակա՛յն անկարո՛ղ էր, ա գո՛ր...

— Գարի քիչ ես տուել, լաւ չե՛ս կերակրել ու խնամել ձիուդ :
էլ ի՞նչ ես խփում անգթաբար. մե՛ղք է, տե՛ս, ոտներում ուժ չի՛ մը-
նացել. սատկում է... — խստութեամբ նկատում էին պատահական
անցորդները :

— Գարի՛, գարի չե՛մ տուել, հը՛. թէ՛ գարի ունենամ հօ չինգ
որբիկներէս կ'կերակրեմ : Խեղճ Միշկօ-իս յարգն էլ խնայելով եմ
տալիս : Եւ նա կարծես խղճահարուած՝ մօտեցաւ իր աշխատակոր-
ընկերին. շոյեց քրտինքով ողողուած քաշը, ճակատը համբուրեց զոյգ
աչքերը՝ — հը՛, Միշկօ ջան. դու չա՛տ շարժարուեցիր այսօր, քայց
պէ՛տք է բուր տեղ հասցնել... այս երեկոյ քեզ խառ պիտի տամ, հա-
ւատա՛ւ, Միշկօ, արբի խոտ, գիտե՛ս գոյնզգոյն ծաղիկների մի խուրց.
համով ու... ոտով : —

Քայց ցաւագար Միշկօն, որ ասես՝ ասկորների վրայ բարակ շղար:
քաշած մի կմախք լինէր, փնչում էր ծանրապէս. լայն-լայն բացուած
քթածակերից հեւ ի հեւ, քույա-քույա գուրս էր ժայթքում նրա շար-
քաշ գոյտթեան շոգին. խեղճով չնշատութիւնից փորը՝ մէջքին էր
կպչոււ. ու գարձեալ լայնանում. օճառի նման փրփրակալած ոտներից՝
տաք քրտինքը առատութեամբ ծորում, իջնում էր սմբակներից գէպի
գետին :

— Հը՛, հը՛... — Գարձեալ մարակի ծանր հարուածներ. Միշկօն
կծկւ. քււ է նորից փորձում է հաւաքել իր ոյժերը եւ ցատկիւ անդից.
— Տի՛ւ, տի՛ւ... կանգնի՛ր, ա՛յ անտէր. ախր մի վնաս կտաս. տո՛նս
կաւել ես, անխը ծառեց, տե՛ս, անիւ. չ՛, անիւ ը՛... :

— Ի՞նչ անիւ ինչ բան. հէ՛ր օրհնած, բոգի թելով կապուած սայ-
լակովդ ու սատկած ձիովդ կամենում ես փո՛ղ աշխատել. ս ու... չի՛ն է
կոտրուել, կոզքերի ձողերն էլ տեղա՛ն են եղել ու վայր թափուել : —

Օհան-աղբարը սրտարեկ ու մտաղբաղ, կոշա, ոտկրոտ ձեռքը տա-
րաւ կարկատաններով ծածկուած, կորած ու գնացած օրերի յիշատակ՝
շայէ բանկոնակի քղանցքին՝ նրբեց արեւակէջ ճակատից քրտնքի չի-

թերը, որոնք հասիկ-հատիկ իջնում եւ անհետանում էին ալեւոր մի-
յուքի թանձր եւ խճճուած թեւերի մէջ . նա իր տեղում մեխուած՝
յուսահատական մի հայեացք ձգեց կտրուած առանցքին, նայեց է . իր
շնչապառ Միշկոյի խղճուկ ասեա զթո թի. ն հայցող աչքերին եւ սկը-
սեց՝ մեղմել հեծկտալ :

— Աղքատի որորա՛նը կտրուելի . է՛ս աւուր համա՛ր է աղքատը
աշխարհ գալիս, ի՛նչ, շան կեանք, զո՞րք . . . — Միշկոյեւ Օհան-աղբարը
ալեծուքի մտքերի մէջ լողում է եւ մղկատում ինչ անելի շիւտնալով,
ահա՛ բարձրագոյն շառաշխուով մոտենում է մի փառաւոր կտուք : զոյգ՝
կերած ու խմած՝ ոսկեգոյն ձիերով, որոնք իրանց ոտքերի պոփիւ-
նով, սիգանեմ քալումածքով ասեա հեղնում են խոզնի ու քաղցածի տա-
րաբախտութիւնը, կառքի մէջ նստած էր մի երջանիկ զոյգ Կոտայքու-
ւոր մի տղամարդ եւ նորասի, սիրուն գիւտգծերով եւ եթերի հոտն՝
ջինջ ու կապոյտ աչքերով շիւտիսի մի ծաղիկ . արեւելքի թանկագին
զոհարներով պնտւած, ներկուած ու օծուած . . .

Օհան-աղբար թաւ յոնքերից մի ին աւագի մի կտոր կաթուեց, ա-
տելու թեամբ ու ցատումով լի հայեացքը դարձեց զէպի այդ բախտա-
ւոր զոյգը : Ս.յ. անակնկալ ու անախորժ հանդիպումը մի սուր, թուճա-
ւոր սլաք էր, որ այնքան խո՛ր թաղուեց նրա վշտաբեկ սրտին մէջ . . .

— Ըանապա՛րհ . ճանապա՛րհ . . . — սոսճարկեց ռոտիկան ու թեան
պաշտօնեան եւ խելով Օհան-աղբար ձեռից կաշուէ խաթաղանը՝ փոփո-
ւապի խփեց ձիուն ու առյապանին :

— Առա՛նցքը, առանցքը կտրուել է . . . — շէ՛ր վեղացրել Օհան-
աղբարը իւր ողբը երբ նկատեց, որ պարկերով բեռնուած սալը մի կողմի
է ընկել . իսկ Միշկոյն իր երկարութեամբ փռուել էր ցեխի մէջ եւ
հարուստի փառաւո՛ր, փայլփլուն ու գեղեցիկ կաթը սլաքում էր որու-
տով :

Մի քանի վայրկեան լուռ ու մունջ գիւտում էր նա իր ընկած օգ-
նականին՝ Միշկոյին՝ պղտորած աչքերը միմիայն ապշութիւն էին ալ-
տայայտում, ասեա լեզուն թանձրացել քմքին էր կպել : Նրա տեսու-
թիւնից անբաժան էր ցլլինտրաւոր, ճարպոտ պարոնի պասկելը, այո՛,
նա ինքն էր . Օհան-աղբարը շատ լաւ էր ճանաչում նրան . . . եւ այդ
երեւոյթը Օհան-աղբար արեւակէջ ճակատին անհնարին վշտի մի օնւ
թուրպ նստեցրեց . մի սպանող հոգեմաշ թուխպ . . . իսկ հնազանդ Միշ-
կոյն ցեխոտուած աչքերը պսպղացնում էր՝ շնչատակի նայելով իր խեղճ
ու կրակ արողը . երկուսն էլ լաւ օրում շէին, երկուսն էլ հասկանում
էին միմեանց ներքին, չօրեկան վրճակը, երկուսն էլ սշխողորմ հեծկտում
էին . Միշկոյն ուս գգում էր, գիտէր որ նա՛ հարուստ եւ փաւթամ ան-
ցորդը՝ «նա» էր, ինքը՝ Միխայիլ Բօրիսիլը :

— Է՛յ, ողորմութեանց մեռնիմ լիստուած, միթէ ես էլ կենդանի

մարդ եմ. — մրմնջաց Սհանը — ես էլ սիրտս հօգի, արեւ ունիմ...
Թո՛ղ խաւարի այգպիսի արեւը, Թո՛ղ մեռնի եւ թմանպէս Կոպիւն...
մի սատկա՛ծ, ցեխակոյու ձի, հինգ որբե՛ր լէ՛կ. հնարաւո՛ր է. իսկ
մարդի՛կ, մարդիկ քա՛ր են, ապառաժ... .

Բ

Նոյն քաղաքի լաւագոյն փողոցներից մինում, պննուած կնոջ
նման՝ հանդիսաւոր բազմել էր Միխայիլ Բօրիսիլի երկյարկանի ապա-
րանքը, արեւելեան հաշակով ու ոճով ներքեւի մասում իր փարթամ ա-
ռեւ տրական տունն էր, ուր մեղուի նման՝ վիտում էին դործակատար-
ները, բեռնակիրները, մշակները... Իսկ վերին յարկում ապրում էր
ինքը՝ երէկ չէ միւս օր դիպումով հարստացած Միխայիլ Բօրիսիլը:

Այդ չքեղ բնակարանի գաւթում, կոյր եւ ծեր մուրացկանի նման
կծկուած՝ մի հին ու խարխուլ տնակ կար, Դա Օհան-աղբօր տունն էր,
մի վշտատեսիլ, ողորմելի խրճիթ, ուր սակայն երեք սերունդներ ձիգ
տարիներով անէլ էին, շնչել ու մսուել, ծաղկել ու թառամել, եւ որը
տալօրինակ հակապատկեր էր կազմում դիմացի ճոխ ապարանքին. մէկի
մէջ՝ կեւ, ու խում, պար ու խաղ, ոսկի ու մարգարիտ առանց սակայն
արդար աշխատանքի եւ մի կաթիլ իսկ քրտինքի, մինչդեռ միւսում՝
դրացի յարկի ներքեւ՝ քաղց ու սառնամանիք. հնուիթիւն, աւերակ ու
փոշի, դառն աշխատանքի ու տաք-տաք քրտինքի հեղեղ է տեղում:
Առաջնում՝ փառաւոր կռուքեր, թանկագին նժոյգ ձիերով տիրոջ սին
փառքի, պարապ ժամերին կամ ցնիկ հաճոյքներին յազուրդ տա-
լու, իսկ երկրորդում՝ մի խեղճ սալակ՝ ոսկոր ու մորթ եղած ձիով՝
տիրոջ օրական պարէնը հայթայթելու համար... հի՛նգ անմայր, մանր
ուրբիկներ. մեր՛կ, բոկոտն, սոված ու վալկացած... ասեա դառն աղքա-
տութիւնը, մարմին է առել եւ այդ իսկ անկիւնում եկել ու պպղել...

Մեծ տունը, դրացի ու փառաշէն տունը տեսնում էր, զգում ու
չօչափում էր իրերի արդի վիճակը սակայն նա սիրտ չուներ. նրա
կրծքում պողպատ կար, ապառաժից աւելի կարծր, անդրդուելի՛ւ, ան-
զգայ...

Գ

Նոյն երեկոն էր. ալեգարդ Օհան-աղբարը իր Միչկօյի կողքն ըն-
կած՝ որտայոյզ եւ յամբաքայլ տուն վերադարձաւ. դրացի բնակարանը՝
ըստ սովորութեան՝ ամբողջովին լուսավառութիւն էր դարձել. ներ-
սում՝ ջահերը, դրսում՝ լապտերներ... Իսկ՛ ղճ սալապանը

միշտ տեսնել էր հարստացող տան այդ գեղեցիկ ընտանիքը եւ սիրտը ճնշող ու հոգին քաղցող մի ծանր ամիս քաշելու։ Ժնչիկը իր աղքատիկ խաղաղ և եւ էր ու մութ, սառն ու ցուրտ։ Է՛հ, պարզ երեխիկ համար մի կարող եմ ասել, որ իսկ Օհան-աղբարը չէ՛ր խորհում իր անպակաս յարակի մթութիւնից, կաթկեղծող աղքատութիւնից ու վատ փլատակներից եւ այդ բոլորը նրա աչքում իրենց վերաբերմանն ու նուրբականութիւնն ունէին... չէ՞ որ այդ խուլ ու խաւար խորշերում աշխարհ եկել՝ ծնունդն ու աճելն էին նրա նախնիքները, ինքը, իր սիրասուն զաւակները, վերջիններս այդ իսկ պահուն այս եւ այն անկիւնում կնկուած՝ միտմէին իրենց ծնողի ու բազմաշարքար Միշկոյի ցանկալի վերադարձին։

— Հայրիկ, հայրիկ, էլի Միշկոն ցիխոտ է, էլի քրտնակոյուարիւններկ, խեղճ Միշկո, չա՛տ ես տանջուել, ամիս, աչքերս կուրանան... — ասաց մեծ աղջիկը՝ Սոփիան։

— Միշկո՛, Միշկո՛, ահա՛ քեզ խոտ տե՛ս, չորացած, համեղ առեւոյտ է, հր՛, Միշկո չե՛ս կառնում ուտել։ խե՛ղճ Միշկո, չա՛տ է չորանել, չա՛տ է չարարուել, քերանն էլ չի բացվում։ — Սոփի մի ասուար փունջ ձեռին, վրայ բերել, Օհան-աղբար կրտսեր զաւակը՝ Սոփիկը։

Թէ՛ տէրը եւ թէ՛ ձին գրագուած էին իրենց հոգսերով, Օհանը քանդոտում էր լծի կապանքները, Միշկան անհնարին յոգնածութիւնից կարծես լաց էր լինում։ Նա անշարժ էր, ծա՛նը վիշտը՝ քրտնորի խոշոր հոտիկների հետ՝ զորովում էր խաբաղանի հարսածներին հեռքերով ապաստած՝ միջոք ու փորի վրայից, Օհան-աղբարը մի քանի անգամ շոյեց նրա վշտոտ ճակատը, համբուրեց խոր ընկած աչքերը, մի քիչ խոտ զրեց նրա առջև մոտրի մէջ եւ վերադարձաւ տան այն խորշը, ուր կնկուած՝ սպասում էին նշան հինգ ամսայր որբիկները։

Դ

Միշկոն Օհանը իր մանկիկներով տախտակի ախտի շուրջը բուխում՝ պահում ինն ծախով իր Ասածուն՝ չոր հացը աղի ու սոխի հետ փամփում էր եւ մերթ ընդ մերթ օրուայ մէջքերից տրակածներից պատմում իր հեռաքրքիր ունկնդիրներին, մեծ-նան վերին՝ յարկում սովորական իրարանցումն էր տիրում։ Երբ զահլիճում նուազում էին զաշնամուրի վրայ, նորատի աղջիկ ու աղայ պարէին գալիս, ասում, խօսում, զուարճանում, կապտաշեւայ, գնդեցիկ տախտիւնին էլ առանձնապէս իւրաքանչիւրին մօտենում, մի մի հաճոյական, սիրալիւր խօսք տալով։

Ընդհանրացում եւ միւս սենեակներում խուճաբ-խուճաբ կղանձ կանաչ սեղանների շուրջը թուզի էին փազում և թանկագին գլանակի ախոթի ծուխը ամպ էր կապոյտ տաքացած գլուխների վրայ։

— Միխայիլ Բօրիսիչ, եթէ չ'նեղանաս Օհան-աղբարը մի ձի պիտի ընծայեմ... մե'ղք է, եղբայր, սատկած ձիով մի' թէ կարո՞ղ է նա իր մանկիկներէի գոյութիւնը պահպանել... — խաչի-թագաւորի վրայ դնելով նոյն տեսակի մէկնոցը եւ արծաթի շեղջր դէպի իրեն քաշելով՝ ասաց մի ջէնտլմէն՝ Այդ դուր չեկաւ Միխայիլ Բօրիսիչին... մի սեւ թուխ պ կախուեց նրա կնճռոտ ճակատից եւ յանկարծ անցաւ նրա ուրախ տրամադրութիւնը... ի՞նչ է նշանակում այս, իր բախտաւոր տանը բազմել եւ ողորմելի Օհանի ու նրա ոսկոր ու մորթ եղած ձիու խօսքն ու զրոյցն անել... :

— Լա՛ւ . ւա՛ւ . ձեր խաղին նայեցէք, Օհանին ո՛չ ձի կ'պակասի եւ ո՛չ սայլակ . օտար հօ չէ՛ . մե'րն է մերը . — միջամտեցին միւսները :

Ե

61 ցրտաշունչ ու ցաւոտ ձմեռներ տեսած Օհան-աղբարը այնքան խեղճ ու աղքատ ընթրիքից յետոյ, խոնաւ թաղիքի վրայ տարածուեց հանգիստ ապու իր յոգնած մարմինն . իսկ նրա հինգ մանկիկները կրծկուեցին հօր չորս կողմում : Օհան-աղբարը խո՛րը քուռն էր մտել եւ մրափում էր . օ՛ . օ՛ . որքա՛ն ախորժելի է աշխատաւոր, տանջուած մարդի այդ ներհն ու հանգիստը նրա երազներն էլ հօ՛ խորը , մէկը՝ միւսից վառ ու փայլուն : Նա տեսնում էր թէ ինչպէ՞ս փառաշէն տան լաւ ձմեռը քից վայր իջնելով իր դրացի մեծատունը . եղբայրական խանդաղութանքով . ողջագութում , գգնում էր իրեն . — «Մենք եղբայրեն'ք ենք» եւ համբուրում են նրանք , մոռացում է երկրային ամեն մի ստոր ու գձուձ հաշիւ . հովանաւորում ու ախրապետում է հոգեկանը՝ վսեմը, զեղեցիկը... մօտենում են նա եւ իր սիրառասն զաւակները . որոնց հաւածական մայրը իբրեւ մի ուրուական , մերկ , բոկոտն ու թշուառ , արտառութի խոչոր կաթիլները աչքերին՝ ցցում է նրա առջեւ : Մեծատունը շօշափում է նրա ցաւոտ , արգահատելի վիճակը եւ թոյլ չի՛ տալիս , որ աղքատի պարկը չալակին՝ դռնից դուռ ընկած՝ հաց մութայ , Եւ այդ մանկիկները անարգել եւ համարձակ վեր ու վար են անում այն փառաշէն տան քանդուղքով , որ միշտ անմատչելի է եղել իրենց համար... մեծատան կիներն ու որդիքը գուրգուրում , յուսադրում եւ փայփայում են նրանց՝ «Մենք եղբայր ենք» : Այդ վեհ ու սրբազան խօսքը աչիկոծում է օդեղէն ովկիանոսը , անցնելով աղքատիկ խրճիթից՝ հարուստի ապարանքը եւ ընդհակառակը : Նրա Միշիգոն էլ մեծատան ձիաւորի մի խորում տեղ էր բռնել եւ անուշ էր անում չորացած առւոյցն ու մաքուր ռակեդոյն զարին երեւում էին եւ իր ծնողները լուսաթաթախ , զուարթադէմ ուրուականները . . նրանք բազկատարած՝ օրհնու-

թեան անձրեւ են տեղացնում երկուսի քլխին էլ, եւ կրկին ողջադու-
րում, կրկին համբուրում են սրտայրին՝

«Մենք եղբա՛յր ենք քաջ... մի աղմուկ, մրմունջի, փառապանքի
մի ցնցող ձայնարկնացնում է ձերունի Օհանին, անապարանդով նա վա-
ռում է ճրագի պատուոյդը եւ վաղ է առնում զէպի քոմ, իսկ զՍիւկօ, խո-
րտեւ է նա ցեխի խրամատում եւ շարչարուում է, ուղղում է դուր կանգնել,
ստկայն ուժասպառ է եւ անկարող, Օհան-աղբարը հանում է դռնից ցու-
նակը, կտրատում է պարանոցի կապը, բռնում է ձրու պոչից եւ մինչ-
չեւ սրունգները ցեխի մէջ թաղում» — հը՛, հը՛, հը՛... — է անում:

«Հը՛, հը՛...» քաջ կարծես լուսաւորում է իւր շուրջը, գոմի
նեղլիկ պատուհանից ներս են խուճել բոցեղէն ճառագայթները եւ ար-
մեն բան կարմրին է տալիս, Յետ-յետ է նայում Օհանը, ի՛նչ կայ, Տէ՛ր
Աստուած, մտածում է նա ինքն իրան, սրբում է մթագնած աչքերը, նրա-
տում է իր տեղում, տեսածը երազ էր, իսկ իրականութիւնը... զրացի
ապարանքը ամբողջովին բոցերի մէջ՝ ալրում է ինչպէս արուսպելա,
կան մի գեղէն՝ հրդեհ է...»

Օհանը չի՛ տատանուում, խելացնորի նման նա գուրտ է թռչում,
տեսնում է թէ ամբոխի իրարանցումը, ուլուսկաններն և այս ու այն
կողմ վազվզող մարդկանց:

— Հրդեհ, հրդեհ... օգնութիւն, օգնութիւն... — Կոռուք ու
գոչում են նրանք, սակայն ո՛չ ոք չի՛ վստահանում մտենալ աչքող ու
շափող բոցերին:

— Եղբա՛յրս, այրւում է եղբայրս... — մի սրտաշարժ ճիշ թռչում
է Օհան-աղբոր կրծքից եւ նա, կտրակի արագութեամբ, աներևութա-
նում է ամբողջովին, կրակ դարձած փայտեղէն սանդուղքներով զէպի
վերնայարկը — մի քանի ակնթարթ եւ բոցերի ու ժխի միջից՝ գրկա-
խառնած վայր է իջնցնում Միխայիլ Բօրիսիչին, նրա կնոջը, զաւակնե-
րին եւ... հազիւ թէ ոտ է դնում սանդուղքի մի աւաիճանին, երբ ա-
հագին շառաչիւնով տապալւում է շինութեան ամբողջ կողմը, և եւ իր
զօսխային ճարճատման ու փլատակների ներքեւ թաղում Օհան-աղբորը
իր խուղի, զաւակների ու Միչկոյի հետ միասին...

ԿՐՊԷ

Քիշնեւ
26 Հոկտ. 1904

